Հաստատում եմ
Դպրոցի տնօրեն՝ Վ.Բալայան
01-09-2022թ.

Դասղեկի տարեկան աշխատանքային պլան
ՀՀ Սյունիքի մարզի

<<Դավիթբեկի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ

6-րդ դասարան

2022-2023ուստարի

Դասղեկ՝Ա.Ղոնյան

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (ԴԱՍԱՐԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ)

V դասարանը բաղկացած է 4 աշակերտից, որից 3-ը աղջիկներ են, 1-ը՝ տղա; Դասարանում կան և ուսման առաջավորներ , և թույլ սովորողներ ; Համերաշխ կոլեկտիվ է ; Աշակերտները օբեկտիվ են գնահատում իրենց հնարավորությունները ; Պատրաստ են մեկը մյուսին օգնելու և աջակցելու ;

2. ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

- ✔ Տարվա ընթացքում կազմակերպել միջոցառումներ , որոնք կօգնեն աշակերտների համակողմանի և ներդաշնակ զարգացմանը ;
- ✔ Ապահովել կրթական ծրագրերի կատարումը՝ հանրակրթական պետական չափորոշիչներին համապատասխան։
- ✔ Օժանդակել դպրոցական հիգիենայի պահպանման որոշակի կանոնների ;
- ✔ Զրույցների միջոցով աշակերտների մեջ ձևավորել բարոյական արժեքներ ;
- ✔ Ինտելեկտուալ խաղերի միջոցով նպաստել նրանց ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը ;
- ✔ Արդյունավետ դարձնել դպրոց-ծնող կապը։
- ✔ Վերլուծել աշակերտների ընթացիկ գնահատականները։
- ✔Հայտնաբերել ցածր առաջադիմության պատճառները և վերացնել դրանք ;

✔ Հետևել աշակերտների հաճախումներին ;

3. ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Աշակերտների հետ անցկացնել զրույցներ ՝ նվիրված հայկական ազգային մշակույթին , ավանդույթներին ; Զրույցների միջոցով ամրապնդել քրիստոնեության ընդունման պատմական նշանակության գաղափարը ; Նշել Սուրբ Զատիկը ; Էքսկուրսիա կազմակերպել Տաթևի վանք , Վահանավանք ; Հաճախակի կազմակերպել մոմավառություն գյուղի Սուրբ Ստեփանոս եկեղեցում , մասնակից դարձնելով նաև ծնողներին ; Հաղորդակից դարձնել ազգային արժեքներին , կրոնական ազգային մտածողությանը ;

4. ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Անցկացնել հետաքրքիր զրույցներ գեղեցիկի և բարու վերաբերյալ ;Հասնել նրան , որ աշակերտները կարողանան շրջապատում տեսնել , զգալ , և գնահատել գեղեցիկը ; Հաղորդակից դարձնել արվեստի տարբեր բնագավառներին ; Ապահովել աշակերտների մասնակցությունը դպրոցական միջոցառումներին Աշակերտներին ծանոթացնել հայ նշանավոր արվեստագետների գործերին / Արամ Խաչատրյան , Մարտիրոս Սարյան , Շառլ Ազնավուր , Հ. Այվազովսկի/ ;

5. ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Աշակերտների մեջ ձևավորել հայրենասիրական զգացումներ , դաստիարակել հայրենիքը պաշտպանելու պատրաստակամություն և մեր հերոսների օրինակով ամրապնդել սեր առ հայրենիք ; Ծանոթացնել մեր պետական խորհրդանիշներին ;

6. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ամրապնդել <Առողջ մարմնում առողջ հոգի > գաղափարը ;Աշակերտներին ընդգրկել սպորտային խմբակում , մասնակից դարձնել ֆիզդաստիարակության ուղղությամբ կազմակերպված միջոցառումներին ; Ապահովել նրանց ֆիզիկական և հոգևոր ուժերի ներդաշնակ զարգացումը ;

7. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Աշակերտների մեջ սեր ներարկել դեպի աշխատանքը , այնպես անել , որ աշխատասիրությունը վեր ածվի ամենօրյա սովորույթի ; Նրանք կարողանան գնահատել և արժևորել սեփական և այլոց աշխատանքը ; Անցկացնել զրույց-զեկույցներ աշխատանքի վերաբերյալ Աշակերտներին սովորեցնել հարգել դպրոցի հավաքարարների, բակապահի աշխատանքը ;

8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Սովորողներին ծանոթացնել բնապահպանական խնդիրներին ;Նրանց մոտ սեր արթնացնել դեպի բնությունը , իրենց շրջապատը ; Հասնել այն բանին , որ յուրաքանչյուր աշակերտ իր պարտքը դարձնի շրջակա միջավայրի պահպանությունը ;

9. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Հրավիրել ծնողական ժողովներ , ակտիվացնել ծնող- դպրոց կապը ; Իրազեկել ծնողներին իրենց երեխաների թույլ և թերի կեղմերի մասին ;Դպրոց-ընտանիք կապն ապահովել ծնողական ժողովների, տնային այցելությունների , անցկացվող միջոցառումներին ծնողներին մասնակից դարձնելու միջոցով;

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթները	Դասղեկի ժամի թեման	Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը	Կատարողներ
1-ին շաբաթ	«Գիտելիքը ուժ է »	Ուստարվա անելիքների քննարկում ; Բաժանել դասագրքերը ;	Դասղեկ , աշակերտներ
2-րդ շաբաթ	<Քաղաքավարության կանոնները >	Զրույցներ անցկացնել քաղաքավարության կանոնների շուրջը ; Աշակերտներին սովորեցնել հարգել մեծերին , խնամքով վերաբերվել իրենցից փոքրերի հանդեպ ;	Դասղեկ , աշակերտներ
3-րդ շաբաթ	«Անկախության տարիները »	Զրույց անց կացնել ՀՀ անկախության վերաբերյալ , բացատրել պետական խորհրդանիշների անհրաժեշտությունը ;	Դասղեկ , աշակերտներ
4-րդ շաբաթ	Արցախյան պատերազմը և մեր համազյուղացիների մասնակցությունը ;	Սովորողներին ծանոթացնել Արցախյան պատերազմում զոհված մեր համազյուղացիների կյանքին ու գործունեությանը , այցելել նրանց ընտանիքներին ;	Դասղեկ , զինղեկ , աշակերտներ

5-րդ շաբաթ	< Տոնդ շնորհավոր , ուսուցիչ >	Երեխաների մեջ դաստիարակել սեր , հարգանք ուսուցիչների և դպրոցի հանդեպ ; Գրել փոքրիկ շարադրություն <Իմ ուսուցիչը > վերնագրով ;	Դասղեկ , աշակերտներ
6-րդ շաբաթ	Զրույց <Հիգիենայի կանոնները >	Հրավիրել գյուղի բուժքրոջը , աղջիկների ու տղաների հետ առանձին առանձին անցկացնել զրույցներ անձնական հիգիենայի վերաբերյալ ;	Դասղեկ , բուժքույր, աշակերտներ
7-րդ շաբաթ	< Գիրքը իմ բարեկամն է >	Օգնել գրադարանում դպրոցի գրադարանավարի հետ դասավորել գրքերի դարակները , հոգ տանել պատառոտված գրքերը նորոգելու վերաբերյալ ; Սերմանել հարգանք գրքերի հանդեպ ;	Դասղեկ , գրադարանա վար , աշակերտներ
8-րդ շաբաթ	«Ոսկեհեր աշունը սահմանային Դավիթբեկում »	Աշակերտների մեջ սերմանել սեր բնության , գեղեցիկի հանդեպ ; Կազմակերպել էքսկուրսիա բնության գիրկը , հավաքել գույնզգույն տերևներ , կազմել գեղեցիկ կոմպոզիցիաներ , նկարել աշնան տեսարաններ ;	Դասղեկ, ԴԱԿ , նկարչության ուսուցիչ , աշակերտներ
9-րդ շաբաթ	«Տարացքում ականներ կան , լինենք զգույշ»	Աշակերտների մեջ ձևավորել զգուշություն , պատասխանատվություն , գյուղի տարածքը զննելու կարողություն , ականներ հանդիպելու դեպքում ճիշտ վարվելաձև ;	Դասղեկ , զին ղեկ , աշակերտներ ;
10-րդ շաբաթ	«Իմ ընկերը »	Երեխաների մեջ ձևավորել և ամրապնդել ընկերասիրության , միմյանց օգնելու , աջակից լինելու գաղափարը ;	Դասղեկ , աշակերտներ ;
11-րդ շաբաթ	<< Իմ ծննդավայրը >>	Երեխաների մեջ ամրապնդել հայրենասիրության , նվիրվածության գաղափարը ;	Դասղեկ , աշակերտներ ;

12-րդ շաբաթ	«Սպիտակի երկրաշարժը և նրա դասերը »	Ակերտները իմանան երկրաշարժերի , տարհանման կանոնների մասին ; Ծանոթանան/ սեյսմիկ գոտի/ հասկացության հետ; Իմանան Հայկական լեռնաշխարհում տեղի ունեցած հզոր երկրաշարժերի մասին ;	Դասղեկ , աշակերտներ ;

13-րդ շաբաթ	< Ով իրազեկված է , նա պաշտպանված է > շարքից՝ օդային տագնապ ;	Հրավիրել ԱԻՆ-ի աշխատակցի , աշակերտներին ծանոթացնել տագնապի ազդանշաններին , պարզաբանել՝ յուրաքանչյուրի դեպքում ինչպես վարվել ; Կազմակերպել փորձնական օդային տագնապ , ստուգել ինչպես են աշակերտները իջնում դպրոցի հիմնանորոգված ապաստարանը ;	Դասղեկ , զինղեկ , ԱԻՆ –ի աշխատակից ;
14-րդ շաբաթ	< Մաքուր , խնամված տետրեր ու դասագրքեր >	Զրույցի միջոցով աշակերտները հասկանան , թե ինչու դասագրքերն ու տետրերը պետք է մաքուր ու խնամված լինեն , արժևորեն այդ գաղափարը ;	Դասղեկ , աշակերտներ ;
15-րդ շաբաթ	Կիսամյակի ամփոփում ;	Վեր լուծել առաջին կիսամյակաում կատարած աշխատանքները՝ ուսման առաջադիմությունը , բացակայությունները , կատարած աշխատանքները և բացթողումները ;	Դասղեկ , աշակերտներ , պարապող ուսուցիցներ ;
	ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿ		
16-րդ շաբաթ	< ՈՒՄ եմ ուզում նմանվել և ինչու >	Երեխաները ներկայացնում են իրենց սիրելի հերոսներին , գնահատում նրանց դրական կողմերը և բացատրում , թե ինչու են ուզում նմանվել ;	Դասղեկ , աշակերտներ ;
17-րդ շաբաթ	<Կրթությունը և մենք >	Արժևորել կրթության դերը ժամանակակից մարդու կյանքում	Դասղեկ , աշակերտներ ;
18-րդ շաբաթ	< Հայաստանի Հանրապետության բանակը >	Գնահատել , արժորել հայոց բանակի դերը պետականության պահպանման գործում ;	Դասղեկ , զին ղեկ , աշակերտներ ;
19-րդ շաբաթ	Բջջային հեռախոսը և նրա վնասակար ազդեցությունը առողջության վրա ;	Ծանոթանալ բջջային հեռախոսի դրական և բացասական կողմերին , կարևորել առողջությանը հասցրած վնասը ;	Դասղեկ , բուժ քույր , աշակերտներ ;

20-րդ շաբաթ	< Հեթանոսությունից պահպանված տոները> շարքից՝ Տյառն ընդառաջ	Պարզաբանել , թե Հեթանոսությունից ինչ տոներ և ինչու պահպանվեցին , որն է Տյառնընդառաջ տոնի խորհուրդը , սերմանել սեր ու հավատ մեր անգնահատելի արժեքների հանդեպ ;	Դասղեկ , աշակերտներ , Հայոց եկեղ. պատմ. ուսուցիչ ;
22-րդ շաբաթ	<Ով իրազեկված է , նա պաշտպանված է > շարքից՝ Ճանապարհային երթևեկության կանոնները ;	Նպատակն է աշակերտներին ծանոթացնել անվտանգ երթևեկության կանոններին , արժևորել դրանք ;	Դասղեկ , աշակերտներ ;

23-րդ շաբաթ	< Լոռեցի հսկան >	Շաբաթը նվիրել Հովհաննես Թումանյանի կյանքին ու գործունեությանը ; Անց կացնել ասմունքի մրցույթ , արժևորել գրքի դերը մարդու կյանքում ;	Դասղեկ , հայոց լեզվի և գրակ. ուսուցիչ , աշակերտներ ;
23-րդ շաբաթ	< Ինչպես եմ հաջողության հասնում >	Մտքերի փոխանակում ՝ որն է իմ հաջողության գրավականը ;	Դասղեկ , աշակերտնե ր ;
24-րդ շաբաթ	<Գարունը այնքան ծաղիկ է վառել >	Կազմակերպել գարնանային ծաղիկների փոքրիկ շքահանդես ՝ նրանց նվիրված բանաստեղծություններով ; Ամրապնդել սերը բնության , գեղեցիկի հանդեպ ;	Դասղեկ , աշակերտնե ր ;
25-րդ շաբաթ	<Բանաստեղծ կարող ես չլինել , բայց քաղաքացի պարտավոր ես >	Զրույց բանավեճ /Արժանավոր մարդ , արժանավոր քաղաքացի / թեմայով; Հիմնավորել , ամրապնդել ՀՀ քաղաքացի հասկացությունը ;	Դասղեկ , աշակերտներ ;
26-րդ շաբաթ	<Առողջ մարմնում առողջ հոգի > շարքից ՝ Աշխարհը պայքարում է չարիքի ՝ թմրամոլություն դեմ	Զրույցների միջոցով հասանելի դարձնել թմրամոլության վնասակար հետևանքները , ինչպես զերծ մնալ նման չարիքից ;	Դասղեկ , աշակերտնե ր ;
27-րդ շաբաթ	44 – օրյա պատերազմը և մեր ապագա ուսուցիչ ՝ Արեն Ավանեսյանը ;	44- օրյա պատերազմում զոհված Արեն Ավանեսյանին նվիրված վահանակի պատրաստում , նրան նվիրված հուշահամալիրի տարածքի մաքրում ; Նպատակը ՝ հայրենասիրական զգաստարների ամրապնդում ;	Դասղեկ , աշակերտնե ր;
28-րդ շաբաթ	Հոգևոր դաստիարակություն շարքից < Աստծուն ինչ հարց կուղղեիր , եթե նրան հանդիպեիր ;>	Ամրապնդել ազգային , քրիստոնեական արժեքները , հեռու մնալ տարածված աղադավորական հոսանքներից ;	Դասղեկ , աշակերտնե ր ;

29-րդ շաբաթ	< Ինչ է բռնությունը>	Զրույցների մրջոցով աշակերտներին ծանոթացնել բռնության տեսակներին	Դասղեկ, աշակերտներ
30-րդ շաբաթ	<Հայոց Մեծ եղեռնը>	Աշակերտները իմանան ցեղասպանության մասին ,ծանոթանան մեր մեմեծերի կյանքին ու գործունեությանը , որոնք զոհ գնացին 1915թ. Ապրիլի 24-ին ;մեծ	Դասղեկ, աշակերտներ
31-րդ շաբաթ	< Աշակերտների իրավունքները և պարտականությունները > սկսվում է ժպիտից	Աշակերտները անպայման պետք է ծանոթ լինեն իրենց իրավունքներին և պարտականություններին ;	Դասղեկ, աշակերտներ
32-րդ շաբաթ	< Հայրենական պատերազմը և դավիթբեկցիների մասնակցությունը >	Այցելել Հայրենական պատերազմում զոհվածների հուշահամալիր ,մաքրել տարածքը , ծաղիկներ դնել ; Ամրապնդել հայրենասիրության , նվիրվածության գաղափարը ;	Դասղեկ, աշակերտներ
33-րդ շաբաթ	< Իմ բնավորության ամենավատ գծերը >	Անանուն թեստի միջոցով բացահայտել յուրաքանչյուրի բնավորության վատ գծերը , քննարկել , միջոցներ ձեռք առնել դրանք վերացնելու համար ;	Դասղեկ, աշակերտներ
34-րդ շաբաթ	Ինչ տվեց 2022-2023 ուսումնական տարին այսուսումնական տարին»	Ամփոփել ուսումնական տարվա արդյուքները ՝ ուսման առաջադիմությունը, ձեռք բերած հաջողությունները և թերությունները ;	Դասղեկ, աշակերտներ